քի միջի ղրամը նրանն էր, հրկբորդն ու ամենաղլխավորը. նա ընտանիքում ամենարտխտավոր, ամենսխնդոր և ամենաանարարն էր համարվում։

Սակայն լինում էր և այնպես, որ միչինքը կարելու ժամանակ դրամն ընկնում էր դանակի բևրանը։ Դա նշան էր, որ այդ ընտանիքին մի մեծ դժրախտություն կտաահի տարվա ընթացքում. դիցուր՝ կովը կսատկի, լավ բերք չի սացվի արտևրից, ատն անդամներից որևէ մեկը կհիվանդանա, կմահանա և այլն։ Ուսահ, փորձված տատիկիննեբն աշխատում էին միչինքը այնպես կտրել, որ դանակի բևրանը չընկնի. իսկ եթե, այնուամենայնիվ, կարելու ժամանակ դանակը հանդիպում էր միչինքի դրամին, կտրողը առաջին իսկ վայրկյանից գդալով այդ, արագ փոխում էր դանակի ուղղությունը այնպես, որ ընտանիքի անգամներից ոչ ոք չէր նկատում։

Տրեսը կրակվելը (չիկնելը)—Երբեմն մարդու երեսը «վառվում-կրակվում ա», ասում էին նորթայազեացիները։ Երեսի տաքանալը զգալով, կարծում էին, թե ինչ-որ տեղ իրենց մասին խոսում են, հավանորեն բամրասում են, որի համար էլ երեսը խաչ էին հանում ու ասում. «Աստված, դու խերն անես»։

Ականջ կանչելը—Երբեմն հանկարծ մարդու ականջում ձայներ են լսվում. Նոր Բայազետում ասում էին՝ ականջս կանչեց։ Ականջը կանչելու ժամանակ ասվում էր՝ խեր, խեր, խեր, այսինքն՝ բարի, բարի, բարի։ Բացատրում էին, թե այդ միջոցին, մի հեռու տեղ, մեկը ականջը կանչողին հիշում է։ Դրա համար էլ սովորություն ունեին, երբ իրենք էլ մեկի մասին խոսում էին, որը ներկս չէր, մանավանդ, երբ խոսակցությունը այդ անձնավորության մասին դրական էր, նախքան խոսելն ասում էին. «Հանգաձա կանչա, այսինչ»։

Սև կատուն ճանապարհը կտրեց—Եթե մեկը փողոցով գնալիս մի սև կատու կտրում, անցնում էր փողոցը ու առջևից մի ուրիշ մարդ չէր գնում, որ տոաջինը անցնեը կատվի կտրած ճանապարհը, կարծում էին, թե այն գործն, որի համար գնում է՝ անհաջող կլինի։ Լավ կլինի անհատպաղ ետ դառնալ կամ ճանապարհը փոխել։

Շների ոռնալը—Երբեմն առանց պատճառի շները դիշերը ոռնում են։ Կարծում էին, թե շան աիրոջ տանը մի փորձանք կպատտհի։ Եթե ընտանիքում հիվանդ կար, կասկածն ու ահր ընկնում էր անեցիների սիրտը. կարծում էին, որ շունը հրեշտակների վրտ էր ոռնում, որոնք եկել էին հիվանդի հոգին առնելու։

Շան տերը իսկույն դուրս էր դալիս, ընտում, թե ինչու է շունը ոռնում (դա՞յլ է երեացել այդ կողմերում, թե՞ ուրիշ բան կա)։ Եթե ոռնտլու դրդապատճառը չէը դտնում, տպա շանր անմիջապես արձակում ու դուրս էր անում. երբեմն տան տերը ստոկացնում էր շանը, որով «փրկվում էր» սպառնտցող տղեաից։

ՏԼՄՈՆԵՐ (ԹԱԼԻՄՄԱՆ, ՀՄԱՅՈՒՄ)

Խալըլել (ախատաճաեել)—Երբեմն մի որևէ աման՝ կճուճ, քրեղան, պղինձ և այլն, խիսա կեղտոտավում էր, մուկ էր ընկնում, կատուն ձագերին բերում, տեղավորում էր մեջը և այլն, և տան տևրն ափսոսում էր այն դեն դցել, բայց և այդ վիճակում էլ այլևս դործածել չէը կարող։ Այդ դեպքում ամոնը լավ լվտնում էր, եթե ղղինձ է՝ ավաղով շփում մինչև լավ փայլելը, ապա ողողում մեռոնաջրով ու ամոնը համարվում էր «խալլուկ»։

Մեկի վրայով թռչելը արգելվում էր—Եթե մի երեխա թռչում էր մի այլ երեխայի վրայով, կարծում էին, թռչողն իր ողջ «ցավն ու չորը» թափում է նստածի դլխին։ Ուսահ դա երբեմն կովի պատճառ էր ղառնում և երբեմն կովին մասնտկցում էին նաև երեխաների ծնողները։

Կռիվը վերջանում էր հաշտությամբ ու խաղտղությամբ այն դեպքում, երբ թռչող երեխան նրստում էր, իսկ մյուսը, որի դլխի վրայով թռել էին, դալիս էը և նույնը անում, որով «ցավն ու չորը» ետ էը տալիս։

Գոթա թխելիս տղամարդ չպետք է լինի թոնրի մոտ—Երբ տանը դաթա էին թխում, բոլոր աղամարդիկ, ինչպես նաև երեխաները, թոնրի մոա չպետք է լինեին, այլապես դաթաները թոնրի կողից կպոկվեին ու կընկնեին կրտկի վրա՝ կուա կդառնային։

Գութանով գետր վարելը—Ամոան ամիսներին, երբ արտերը պատրաստվում էին մի կաթիլ անձրեի համար, Նոր Բայազետում կանայք հավաքվում էին, մի դութան վերցնում, քաշելով տանում գետը և սկոում գետը «վարել» առանց եղի կամ ձիու, որպեսզի անձրև դա։

Լծվելով դութանին, դութանը յոթ անգամ վերև էին տանում՝ դետի հոսանքին հակառակ ուղղությամբ և յոթ անդամ էլ ներքև, որից հետո, դետի լայնքով էլ քարշ էին տալիս երեք անգամ։ Այսպիսով ջրի մեջ ստացվում էր խոչ։

Գետում էշ լողտցնելը—Որր գութանով գետը վտրելը չէր օդնում աստծու գութը շարժելու և անձրև բերելուն, մի քանի կին հավաքվում էին,

մի մոխրագույն էշ քաշելով տանում, դետը մրտցընում ու սկսում լողացնել։ Յուրաքանչյուր կին յոթ աման ջուր սիրտ լցներ ավանակի վրա ու յոթ անդամ դաստացնելը նրան։

Խուշկուրուրիկ մանե ածելը—Անձրև բերելու համար դիմում էին նաև հետևյալ միջոցի, որը Նոր Բայազետում «խուշկուրուրիկ» էր կոչվում։

Երեխաները մի մարդանման խրտվիլակ էին շինում, հագցնում էին կարմիր շոր, գլխին դնում մի ջարդված կճուճ, երկու տղա բռնում էին խրրտվիլակի թևերից, որեէ սրբի անունը տալով, փողոցներում ման էին ածում ու ողորմություն՝ բաժին, հավաքում, որ մատաղ աննն անձրև գալու համար։

Շրջելով փողոցներում երդում էին.

Խուշկուրուրիկն էկել ա,
Կարմիր (շալե) շապիկ խաքել ա,
Կարմիր գոաիկ կապել ա,
Եղ տվեք, ձու տվեք, մատաղ արեք։
Անձրևը գա, արտերը խովնան...

Հավաքած մթերքներով ու դրամով երեխաները որեէ սրբին, ում անունով որ հավաքել էին, մատաղ էին անում, որ անձրև գա։

Փողոցները շրջելու ժամանակ, բաժին տալու հեա միասին, ամանով էլ ջուր էին դուրս բերում ու լցնում խուշկուրուրիկի գլխին։

Դարարու (Արարու Սբնշանը). Սուրբ նշանը—Որ վերը հիշատակված միջոցները չէին օգնում, ժողովուրդը գիմում էր սրբերի օգնությանը։ Ամենաղորավոր սուրբը համարվում էր Սևանա վանքի Դարարու (Արարու) Սբրնշանը, որը հասարակ երկաթյա սե խաչ էր։ Ինչպես կարծում էին նորրայազեցիները, այս խաչը օժտված էր հատկապես անձրև բերելու ղորությամբ։

Մի այդպիսի խաչ էլ դտնվում էր Նորադուզ գյուղում, մի գյուղացու մոտ։ Նախ այդ խաչն էին դուրս բերում (ավելի էժան էր նստում), երբ այդ էլ չէր օգնում, հավաստացյալ ժողովուրդը դիմում էր հոդևորականությանը՝ Սևանից բերելու Դարարու (Արարու) Սբրնշանը։ Այս խնդրանքի հետ նրանք խոստանում էին լավ վարձատրություն, մատաղներ։ Մեծ շուքով այդ խաչը բերում էին Սևանից, մինչև Նոր Բայազետ ընկած գյուղերով ման էին ածում, ապա բերելով Նոր Բայազետ՝ երդելով, աղոթքներով, խաչը տանում էին արտերը։

Օձի շապիկը պահելը տրլմս ա—Նոր Բայազետում կարծում էին, որ օձի մաշկափոխության ժամանակը երբ գալիս է, նա հարմարվելով որեէ քարի, ծառի, մացառի կամ մի այլ բանի, ղդուշությամբ դուրս է սողում իր հին մաշկից։ Այդ մաշկը Նոր Բայազետում կոչվում էր օձի շապիկ, և համարվում էր տրլմս։

Երեխաները, նույնիսկ մեծահասակները, երբ պաշտում դտնում էին օձի հին մտշկը, խնամքով վերցնում էին ու դնում իրենց գլխարկի մեջ ու այսպիսով իրենց պաշտպանում օձի խայթոցից։

Թուզա հացը պտի ուտել—Երբ մեկի տանը հաց էին թխում ու հարեաններից որեէ մեկը դուրս էր, հաց թխողը առաջարկում էր «թազա» հաց վերցնել, ուտել, եթե չուտեր, ականջները կխլանային, իսկ եթե հղի էր, երեխան աչքը ծուռ կծնվեր։

Եզների եակսաին ձու էին խփում—Գարնանը, երբ եղներին առաջին անդամ ղուրս էին հանում լծելու, որը Նոր Բայազետում «խամտխանես» էր կոչվում, հենց գոմի շեմին նրանց ճակատին մեկական ձու էին խփում, որով խափանում էին չար աչքի աղդեցությունը։

Եզների վզից դալդրղան (ճմայիլ) էին կախում—Որպեսզի եզներին չար աչք չկպչեր, նրանց վղից դաղդան էին կախում, նաև ղանդակներ՝ կապույտ հուլունքներով, որոնք նույնպես պաշտպանում էին չար աչքից։

Դաղդրղանը սախտակի կտոր էր, կաղնի փայտից, կիսաշրջանակաձև, մի ծայրից անցք՝ թել անցկացնելու համար, վրան երկու կողմից փորադրված խորհրդավոր դծեր ու նշաններ, որոնք հմայիլին տալիս էին դեղեցիկ քանդակված իրի տեսք։ Ընդ որում, մի դաղդրդանի նախշերը երբեք նման չէին լինում մյուսի նախշերին։

Կոչերի վզից րոժոժ են կախում—«Կոչերին», նևրհնևրի, ամլիկ դառների վղից րոժոժ էին կախում՝ պղնձյա անսմեջ փոքրիկ ղանգակ, որի մեջ դցում էին մի մետաղի կտոր, որը շարժվելիս ախորժելի ձայն էր հանում։ Բոժոժը կախում էին կենդանիների վզից, որպեսզի նրանց չար աչք չկպչի։

Նորածին երեխայի թևին կապույտ հուլունք էին կապում—Նոր Բայազետում նորածին երեխաների թևին, վղին ու օրորոցին կապում էին կապույտ հուլունքներ, երբեմն էլ օրոճիկներ, խխունջներ, որպեսզի նրանց չար աչք չկպչեր, չհիվանդանային։ Եթե երեխան այս կամ այն պատճառով հիվանդանում էր, ծնողներն ամենից առաջ մտածում էին, թե նախորդ օրը կոդմնակի մարդ, հատկապես կապույտ աչքերով կին կամ աղջիկ եկե՞լ է իրենց տուն, տեսե՞լ է փոքրիկին ու ի՞նչ է ասել։

Բուժման համար գտնում էին մի որեէ կենդանու՝ կովի, ոչխարի, այծի աչք ու գցելով կետնին, ոտքով ուժեղ խփում էին, աչքը պայթեցնում, հետո էլ ասում. «Չար հաշկ, չար փուշ

պադոի, տղեն (հիվանդը) ցավից պրծնի»։ Եթե աչքը պայթում էր, հավատում էին, որ երեխան առողջացավ։

Ղաստարկ ormorogp չէին ormorում, արլմս ա, երեխային բան կարող էր պատահել։ Նախ և առաջ երեխան, երբ պառկեր օրորոցում, չէր քնի, չարքերը կխանդարեին։

Հաշկոել ա (աչքով են սվել)—Երբ մեկի նկատմամբ վայ անելով զոհունակություն էին արտահայտում. «Վա՜յ, էս իմ՞լ ա լավցե» կամ. «Վա՜յ, էս իմ՞լ սիրուն աղա յա» և այլն, մայրը, քույրը, ով որ այդ պահին այդտեղ էր դանդվում, իսկույն կսմթում էր մանկան փափուկ աեղից, որ աչքը չկպչի։

Եվ եթե, այնուամենայնիվ, երեխան հիվանդանում էր, ամբողջովին վերագրվում էր այն մարդուն, որը վայով զոհունակություն էր արտահայել երեխայի հասցեին։

Աչքով սալը հավասարապես վերաբերում էր նաև անասուններին։ Եթե ասում էին. «Վա՜յ, հըլը հիշկա, էս կովի կուրծքը, էսի էրկու վեզրո կաթ կաա», կովատերը ղիմում էր բոլոր միջոցների, որ կովին փրկի չար աչքից։

Երբ մեկը սկսում էր ծուլանալ ու նախկին եռանդով չէը աշխատում, սովորում և այլն, նրա մասին էլ էին ասում՝ հաշկոել ա ու բուժման միջոցների էին դիմում։

Տղի մաղերը խուզում են օխտը սարի ճեռո—Եթե մի ընտանիքում երկար սարիներ աղա չէր ծնվում, բացի դանաղան միջոցները, մասաղ էին խոսասանում որեէ սրրի. Գեղարդին, Այրիվանքին, Ասսվածածնին և այլն, ասելով. «Ջո մեղի մե խաա աղա հլնի, օխտը սարին թմմելուց յետո, մե խաա խերվնիկ հոլթիկ, յա էլ չէ՝ մե խաա կոչ կասննենք Քեղարթ մասաղը մորթենք, աղի մազերն էլ խուղենք, թողենք վանքին հիշասակ, ղանք տուն»։

Տղեն աղջիկ ա դառնում, աղջիկը աղա—Նոր Բայազետում երեխաները հավատում էին, որ եթե «Տղեն հսնի անեղնակի (ծիածանի) ակով, աղջիկ կդառնա, համա որ աղջիկը հսնի անեղնակի սակով, էն էլ աղա կդառնա»։

Կաթը եղով ելնի—Մառղարղսւրի առնին, մեծ պասի նտխավերջին շաբաթվա կիրակիին, եկեղեցում նոը բողրոջած ուռենու ճյուղեր էին բաժանում հավատացյալներին, որոնք ճյուղերը տուն առնելով, ամրացնում էին խնոցու պարանի վրա։ Նպատակն այն էր, որ այսուհետև «ձձումը բարաքոմն» լիներ, կաթը յուղոտ և ամենակարևորն է՝ ձձումին չար աչք չկպչեր։

Մածուն մերելը (մակարդելը) և կարելը—Մածուն պատրաստողը, բացի այն, որ մերանը լավ հարում էր ու լցնում կաթի մեջ, կլորացրած շերթունքներով երկու անգամ պետք է բերանը օդ բաշեր, որով թանձրություն էր տալիս մածնին։ Այդ աևելուց հետո, դգալով նորից իատնում էր կաթը, իտշտկնքում, ապա ծածկում ու շորով փաթաթում ամանը։

Խստիվ արգելվում էր ուտել նույն օրվա մերած մածունը, մերոցի վրա պետք է դիշեր անցներ և միայն այն ժամանակ կարելի էր մերոցը կարել։

Փոfr երեխայի ծոծրակը չեն պաչում—Փոքր երեխաների ծոծրակը արգելվում էր համբուրել, «արլմս» ա. այլապես երեխան կմեծանա, խոսվական կլինի։ Դրա համար էլ, եթե մեկն ու մեկը ուզում էր երեխայի ծոծրակը համբուրել, իսկույն նախազդուշացնում էին։

Երեխայի առաջին առամի ճաշելը—Երբ երեխայի առաջին առամը դուրս էր գալիս, մայրը կամ աատիկը առամախառիկ էին դնում։

Ջավարը, կանեփը կճուճով դնում էին թոնիրը, ևփում։ Երեկոյան, երբ ընտանիքի անդամները հավաքվում էին, լինում էին նաև հյուրեր երեխայի հարազատներից, թոնրից հանում էին հառիկը, երեխային նստեցնում դորգի վրա, իսկ ձմեռը՝ քուրսու վրա, ջուրջը հավաքվում էին հարազատները, հատկապես առն երեխաները, յուրաքանչյուրը սառնալով իր բաժին հառիկն ու քաղցրավենիներ, դովասանական խոսքեր էր ասում մանկան հասցեին ու րոով լցնում նրա գրկին։

Նպատակն այն էր, որ երեխան լավ առամներ ունենար, որոնք շարված լինեին ցորենի հատիկների նման։

Երեխան փոխում է կաթնատամները—Ատամնափոխության ժամանակ երեխան վերցնում էր իր հին առամը, գալիս թոնիրի ական մոտ ու ասում. «Ահո քե շան ատամ, առ ընձի դառի առամ...»։ Այսպես մի քանի անդամ կրկնելով՝ դուրս եկած առամը նետում էր թոնրի տակը, հավատալով, որ ինքը շան առամը ավեց ակին, փոխարեն նստանտ դառան դեղեցիկ, սպիտակ ու լավ ատամ։

Շորը մարդու ճագին, կոճակ չեն կարում—Երբ մեկի շորը պատռվում էր կամ կոճակը պոկվում էր, հադին ասեղ չէին րանեցնում՝ իսաիվ արգելվում էր։ Ասում էին. ասեղ կարելի է րանեցնել մեռած մարդու վրա, այսինքն՝ մեռածի շորերն էին կարում, վրան հարմարեցնում։

Մուր կե (կեր) փարա գթնաս—Մնողները երեխաներին համոզում ու ստիպում էին, որ նրանք մուր՝ վառված, սևացած հաց, ուտեին, որպես թե արլմս է. «Մուր ուտողը փարա յա գթնում»։ Ի-

րականում աղքատ ծնողներն ափսոսում էին վատ-ված հացը դեն նետել։

Կոճիկ կերեմ, մազերս ճերղնան—*Հաճախ աղ-ջիկներին ոտիպում էին մոմ միչի կոճիկն ուտել, որպես տըլմա՝ ղեղ, ասելով. «Կոճիկ կերեք, մա-զերս հերգնան»։*

Դանակը շուտ սրելու սըջոց—*Կային մարդիկ, որոնց դանակը շատ շուտ էր սրվում. երեխ նրանք դիտեին, դանակը այնպես հարմարեցնել հետևի վրա, որ շուտ սրվի։ Ժողովուրդը այդպիսի մարդ-կանց հասցեին ասում էր. «Այսինչի մոտ գիլի մազ կա, ըտու համար էլ ընդու դանակը շուտ ս սրվում»։*

Գլխի մազերը չեն տրորում—*Երբ երեխայի մաղերը խուղում էին, անմիջապես պիտի հավա-քեին ու տաներին աղբանոց լցնեին, որ չմնար գետնին՝ ոաքի տակ, որպեսզի անցուդարձ անող-ները չաըորեին. հավատում էին, որ եթե մազերը մնային հատակին ու ոաքի տակ տրորվեին, մա-զերի տիրոջ գլուխը կցավեր։*

Կովը կցամաքի—*Կանաչ սոխի ցողունը երե-խաները դնում էին բերաններն ու փչում։ Այդ ինքնադործ գործիքից ձայներ էին լսվում։ Մեծե-րը խստիվ արգելում էին փչելը, ասելով, թե՝ կթվող անասունները կցամաքեն, կաթ չեն տա։*

Կովի պտկերը կտտեն—*Երեխաները կանաչ սոխի ցողունը ճեղքելով երեք մասի՝ 2—3 սմ, ղնում էին բերաններն ու անընդհատ կանչում. «Խըմրարա-րա-րա րա, խըմրա-րա-րա-րա»... Մինչև ցողունի այն մասը, որը դանվում էր բերա-նում, ասաիճանաբար դանդրանում էր։ Մեծահա-սակները խստիվ արգելում էին ու պահանջում, որ անհապաղ դադարեցնեն խաղը, ասելով, որ կթի անասունների պտուկները կուռեն ու կցամա-քեն։*

Հավի թևերը աղջիկներին—*Տանը, երբ հավի մսով կերակուր էին եփում, մայրը թևերը տալիս էր աղջիկներին ու ասում. «Կերեք, էսի տըլմա ա».*

Կարծում էին, որ աղջիկները հավի թևերն ու-տելով, շուտ թևեր կառնեն ու կթռչեն, այսինքն՝ կամուսնանան։

Հավի սիրտը տղաներին—*Մայրը հավի թևերը տալիս էր աղջկան, սիրտն էլ տալիս էր տղա-յին, որ հատ-հում, առանց ծամելու կուլ տա։ Դա էլ տղաների տըլմանն էր. արվում էր այն նպատա-կով, որ տղան հավի սիրտը կուլ տալով՝ սրտոտ, քաջ լինի։*

Ծուխը տանից դուրս հանելը—*Երբ ծուխը թոնրատնից դժվարությամբ էր դուրս դալիս, ծխին վախեցնելու նպատակով ասում էին. «Մու-խը րոնեք, մուխը րոնեք, աղը ղնենք շալակը...»։*

Այսպես կրկնվում էր այնքան ժամանակ, մինչև տունը ծխից ղատարկվում էր։ Ասում էին, թե «տըլմա ա». միայն այդ բառերը ասելիս պիտի վերչում տանն անդամ ավելացնել՝ չըխ, չըխ, չըխ...

Հրեշտակակոխ ինելը—*Ժողովրդի մեջ հավատ կար, որ իրր թե, երբ մեռելը տանում են թաղե-լու, նրան հուղարկավորում են աներևույթ ոգի-ներ՝ հրեշտակներ։ Մարդիկ պիտի տներից դուրս գային, դիմավորեին նրանց և ուղեկցեին։ Ովքեր դուրս չէին գալիս, նշանակում է արհամարհում էին հրեշտակներին. նրանք էլ մտնում էին տնե-րը ու «ղանում», այսինքն՝ հիվանդություն էին գցում ըմրոստի տունը, դիվահար տնում, որը նոր բայագետում հրեշտակակոխ էր կոչվում։ «Հրեշտակակոխ հելածի» հարաղատները սկսում էին հիվանդին տանել սրբերի մոտ, մոմ վառել, խունկ ծխել, նույնիսկ մտաղ խոստանալ ու անել, մինչև հիվանդը լավանում էր։*

Այդ է պատճառը, որ փողոցով մեռել տանելիս պետք է իոլորը՝ թե՛ մեծ, թե՛ փոքր, ղուրս գա-յին. հատկապես կրծքի երեխաներին պետք է դուրս բերեին, որպեսզի հրեշտակակոխ չլինեին։

Կողրսով փակել—*Նորապսակների առաղաստը խափանելու համար նրանց թշնամի մարդիկ գաղա-նի վերցնում էին մի կողպեք և գնում եկեղեցի։ Ե-կեղեցում պսակի արարողության ժամանակ արվ-յալ մարդը ծածուկ հանում էր գրպանի կողպեքը և րանալիով կողպում։ Այնուհետև կողպեքը բե-րում էր հարսանքատուն ու ծածուկ նետում նո-րապսակների կուրը, ինքը հեռանում, հավատա-լով, որ փեսային առնականությունից ղրկեց։*

Մեկ երկու օրից, երբ պարզվում էր, որ նո-րապսակների վրա կողպեք է ղրված, փեսայի հարաղատները սկսում էին տանիքում փնտրել կողպեքը։ Երբ կողպեքը գտնում էին, րաց էին անում. եթե րանալին հետը չէր, ջարդում էին ու գցում դետը, ջրհորը, և «արլմսը» վերանում էր։

Դանակով կարկուտը կտրում են—*Երբ կար-կուտ էր գալիս, դանակներն առնում իսկույն գուրս էին գալիս ու յոթը կարկուտ դանակով կտրում, որպեսզի կարկուտը ղադարի։*

Եթե հորդ ու երկարատև անձրև էր գալիս ու պատուհաս դառնում ժողովրդի համար, որպեսզի անձրևը ղադարի, տնից դուրս էին նետում շիկա-ցած խաչերկաթը։

Մեռոնաջուրը որպես ախտահանիչ—*Եկեղեցում մանկանը կնքելիս ավազանի ջրի մեջ գցում էին յոթը կաթիլ մեռոն։ Երեխային մեռոնաջրից հա-նելուց հետո, «ջուրը չէին թափում, այլ տանում էին անները, որպեսզի «աման խալըլեն»՝ մեռոնա-*

ջրով լվանան հորամած ամանները (տե՛ս տլըմս № 1)։

Նետ դնելը—Նետը պողպատից, երկաթից կամ րրոնզից ոլորված, մի կետում հատված օղ էր, տաս-տասնհինգ սմ արամագծով, որը կտնայք զցում էին իրենց վիզը։

Նոր Բայազետում այգպիսի նետեր կարում և կարում էին հղի կտնայք, որոնք վախենում էին երկունքի ցավերից, ինչպես նաև ցավագտրները*։

Գլխի շորին ասեղ խփելը—Նոր Բայազետում կտնայք զլուխները շորով կապում էին ու գլխաշորի մեջ մի կամ մի քանի ասեղներ խրում։ Այդ տըլմսը ուներ երկու նպատակ։ Առաջինը և գլխավորը՝ ավյալ կինր պաշտպանված լինի չար ոգիներից, սատանաներից. ասեղը գլխաշորի մեջ կրելն ուներ այն նպատակը, ինչ-որ նետը։ Երկրորդը զուտ գործնական էր. որ գլխաջորը քամին չտաներ։

Դատարկ ամանով ճարևանի տունը չեն գնա—Նոր Բայազետում, երր հարեանը հարեանից որևէ աման էր վերցնում ժամանակավորապես գործածելու և վերջտնելով վերադարձնում էր, պետք է մի րան գներ մեջը, հատկապես գարնան ամիսներին։ Եթե ոչինչ չուներ, տպտ պետք է գոնե ջուր լցներ, տյլապես ամանի տերը կմտածեր, թե գիտմամբ է այգպես արել, որ իրենց կովերը, ոչխարները ցամաքեն, հավերը ձու ածելուց կտըրվեն։

Ջորեջշմուա, կիրգմուա—Նոր Բայազետում չորեքշտրթի երեկոյան, երր արգեն ճրագները վառում էին, տշխատելը արգելվում էր (պար անել, գուլպտ գործել, կարկատան անել և նման րաներ)։ Երեկոն կոչվում էր Ջորեքշմուտ։ Նույնը վերտրերում էր նաև շտրաթ երեկոյին։

Եթե մեկը նշված երեկոներին գործ աներ (րուրդ գզեր, թել մաներ, լվացք աներ և նման տնային աշխատանքներ կտտարեր), տտն մեծահասակ կանայք կարգելեին կամ եթե հարեան կանանցից մեկն ու մեկը գար, նկատողություն կաներ, կտիպեր իսկույն թողնել աշխատանքը։

Հացը գլխին չեն գնում—Հացը գլխին գնելը խստիվ արգելվում էր, քանի որ տըլմս կա. եթե հացը գլխին գնեին, ապա գինը խիստ կրարձրանար։

Հացը մգրոով չեն կտրում—Հացը՝ լավաշը մկրատով կտրելը խստիվ արգելվում էր։ Կարծում էին, հացը կպակասեր, կկտրվեր։ Թոնիրի վրայից թռչելը նույնպես արգելվում էր։ Ենթագրում էին, որ թռչողի վրայից կեղտոտ բաներ կթափվեն թոնիրը։

Օձ ջրի վրեն չճարաւա (խանգարի)—Երր մեկը ջուր էր խմում, մի ուրիշը նրան չպետք է «խարաներ», եթե նրանք նույնիսկ թշնամիներ էին, պետք է թույլ տար, որ ջուրը խմեր, վերջացներ, նոր կովեր, եթե եկել էր կովելու։ Այս հավատալիքը գալիս էր այն րանից, որ նույնիսկ օձը, երր տեսնում է, որ մեկը ջուր է խմում՝ չի խայթում, մինչև ջուրը չխմի, վերջացնի։

Գնացողի ետևից ֆար են գցում—Երր աանից մեկը գնում էր, ու ատնտերը ուղում էր, որ նա այլևս չվերադառնա, նրա հետևից քար էր գցում (ազգկան աանում են հարս)։

Գնացողի ետևից ջուր են ցանում—Նոր Բայազետում, երր աան աերը ցանկանում էր, որ գնացողը չուտ վերադառնա, նրա գնալուց հետո ետևից մի ամանով ջուր էր թափում։

Եթե տանից մեկին տանում էին րանակ, րանտարկվում էր կամ ուղղակի գնում էր օաարություն փոգ վասաակելու, գուրս էին գալիս օդին ձեռներին, խմելով մեկտեղ րաժակ օգի, գնացողին րարի վերադարձ մաղթում, ապա ամանով ջուր շաղ տալիս ետևից։

Ձիու նալը ատև նակատին—Դոան ճակատին ձիու նալ էին խփում, որն այդ տունը շատ աչքի ազդեցությունից ղերծ էր պահում։

Անասունի գանգր պատին են խփում—Տան աչքի ընկնող տեղից կախում էին իրենց տնասուններից որևէ մեկի (եղ, ձի, խոյ և այլն) կամ եղջերուի գանգ, որին տանեցիներից մեկը խփել էր որսի ժամանակ։

Դոլ եփելը—Նոր ծնած կովը երկու կամ երեք անգամ կթում են, կաթը գեո խեժ է լինում և նրանից այսպես կոչված «դոլ» են եփում։ Խեժը կաթսայով գնում են թոնիրը, մեջը գցում յոթը գարու հասիկ և մի կապույտ թելով թելած ասեղ։

Գարին առատության և բարության նշան է, կապույտ թելն ու ասեղն էլ՝ չար աչքի աղդեցությունը խափանելու համար։

Օձի թթու եփելը—Մեծ պասի վերջին շարաթվա հինգշարթի օրը՝ ավագ հինգշարթի, նոր Բայազետում ամեն մի տուն եփում էր թթու, որը օձի թթու էր կոչվում։

Մտնր կարավան կտղամրը, որ աշնանը յուրաքանչյուր ընտանիք պատրաստում էր ու լցնում կարասները, կոչվում էր թթու։ Ամեռվա ընթացքում այդ թթվից պատ օրվա ճաշ էին եփում։

Վերջանում էր մեծ պասը, վերջանում էր նաև

* Հայ կանանց մոա այդ սովորությունը դոյություն է ունեցել շատ վաղ ժամանակներից և հասնում է մինչև րրոնզի զարաշրջանը. այդ մասին վկայում են այն րազմաթիվ իրերը, որոնք ի հայտ են գալիս դամրարանների պեզումների ժամանակ։ Թե ինչ նշանակություն են ունեցել այդ օդերը հնում, գեո ատույդ հայտնի չէ։ Հնագետներն այդ օդերը դասում են կանացի զարդարանքների շարքը, թեև դրա մեջ ճշմարտություն կա (ծ. կ.)։

պաստվուր ճաշերի եփելը, այդ թվում կաղամրով թթուն, որը գրեթե ամբողջ ձմեռվա ընթացքում կերել էին ու ձանձրացել։

Մեծ պասի վերջին շաբաթը լինում էր դարնանամուտին։ Արթնանում էր բնությունը, ինչպես նաև ձմռանը քուն մտած օձերը։ Եվ ահա, յուրաքանչյուր տուն այդ օրը, պարտադիր, պիտի թթու եփեր, իսկ եթե որևէ մեկի թթուն վերջացել էր, որը հազվադեպ էր պատահում, այդ դեպքում հարեւաններից էին խնդրում և բոլոր տնեցիները այդ վերջին թթուն պիտի ուտեին, որպեսզի տարվա ընթացքում օձը իրենց չխայթեր, իսկ եթե մեկն ու մեկը թթու չէր ուտում, կարծում էին, թե նրա կյանքը մնում էր վտանգված։

Մոկափոխին հասնեն ինչ պտի տան ուտա—Հղի կանանց (որոնց Նոր Բայազետում մոկափոխ են ասում), պետք է տային ուտելու, ինչ որ նրանք ցանկանում էին, որպեսզի երեխայի աչքը ծուռ չլիներ, կամ մի այլ պակասություն չունենար։

Եթե երեխան ծնվում էր և ունենում էր որևէ ֆիզիկական պակասություն, սկսում էին մեկ առ մեկ վերհիշել, թե երեխայի մայրը հղիության ժամանակ, որտեղ ինչ է ուղեցել ուտել, բայց չի կերել. դրանով էլ պատճառաբանվում էր երեխայի պակասությունը։

ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շոռ րլիք ուտելը—Նոր Բայազետում ամեն տարի ս. Սարգսի առնին աղի բլիթ էին պատրաստում։ Երեկոյան ամուրի երիտասարդները, տղա թե աղջիկ, ուտում էին մեկական բլիթ ու ապանց ջուր, թեյ, թան խմելու քնում։ Գիշերը, երազում, երր խիստ ծարավում էին և որևէ մեկը ջուր էր ասլիս, նրան էլ համարում էին իրենց ընտրյալը։ Առավոտյան արթնանում էին ու յուրաքանչյուրը պասմում, նկարագրում էր, թե ով է իրեն ջուր տվել. ուրախանում էին, եթե իրենց սրաի ուզածն է եղել ջուր տվողը, իսկ եթե ջուր ավող չէր լինում, խիստ հուսահատվում էին, կարծելով որ այդ տարի էլ չեն ամուսնանա։

Տրնդեզ (յաոռն ընդ առաջ)—Փեարվարի 14-ին Նոր Բայազետում տոնում էին տրնդեզը՝ յաոռն ընդ առաջը։

Երեկոյան ժամերգությունից հետո, եկեղեցուց ղղուշությամբ ու հանդիսավորությամբ վառվոդ մոմ էին բերում տուն, որ այդ մոմով վառեն իրենց տրնդեզը (մի խուրձ խոտ, որը նախօրոք պատրաստել էին)։ Տրնդեզը վառելուց հետո բոլոր տնեցիները դուրս էին դալիս ու շրջապատում խարույկը, երգում ու պարում նրա շուրջը, իսկ ում տանը որ նորահարս կար, նրան էլ դուրս էին բերում, յոթ անդամ պտտեցնում խարույկի շուրջը, բոցերի վրայից երեք անդամ ցատկել տալիս։ Ձենք ունեցող տղամարդիկ կրակում էին։

Որր խարույկի կրակը սկսում էր մարել, եղանով կամ մի ամանով կրակ էին վերցնում ու առնում առն շուրջը պտտեցնում, այնուհետև բարձրանում էին տանիքն ու այնտեղից մոխիր թափում հերթսից, որից հետո կրակը տանում էին դոմը, հավանոցը։

Այս ծիսակատարությունը արվում էր, որ օջախը միշտ վառ մնա. հարսին տրնդեզի շուրջը ման էին ածում, որ հարսը համեստ լինի ու իր «ցավն ու չորը» թափի տրնդեզի կրակի վրա, տանը և առնեցիներին չար աչք չկպչի, բերքը առատ լինի, կովերը, ոչխարները առատ կաթ տան, հավերն էլ շատ ձու ածեն։

Հաւրսիճ տուճ տանելը—Նորահարսին առաջին անգամ, երբ սմուսնու տուն էին բերում, սմուսնու բարեկամներից մեկը հարսի կիրկն էր դնում մի տղա երեխա, որ նորահարսի առաջնեկը տղա լինի։ Հարսին կեսրանց առնը առաջին անդամ կերակրում էին մածնով, որ ոչ մի հարցում սեերես չլինի։

Փեսալի տան շեմն ածցնելը—Որր հարսն ու փեսան դհոլ-զուռնայի ուրախ նվադի տակ մոտենում էին փեսալի տան շեմին, ազարրուշին՝ ամուրիների ավադը, սուրը հանում ու պահում էր հարսի ու փեսայի ղլխավերևը, որ նրանք շեմն անցնեն սրի տակով, որով չարքերին, սատանաներին չէին թողնում հարսանքատուն մտնել (նետ դնելու տարրերակն է, տե՛ս տրլմանների բաժինը)։

Նորապսակների շեմն անցնելու պահին երկու ափսե (քրեզան) էին դնում հարսի ու փեսայի ոտքերի առակ, նրանք էլ ոտքով խփում ու ջարդում էին ափսեները, որով չարը իւափտնում էին։

Ագլաղիզ—Նոր Բայազետում սովորություն կար մեծ պասի տոաջին օրվանից ադլադիզ կախել տան օճորքից։ Դա մի սոխի ղլուխ էր, որի ջուրջը խրում էին յոթ հաա հավի փետուր, որ մեծ պասի յոթը շաբաթն էր նշանակում։

Բարիկենդանի երեկոյան տան բոլոր անդամները ճոխ ընթրիք էին վայելած լինում. օրվա բոլոր մսեղեն, յուղեղեն և մյուս տեսակի ընաիր խորտիկները ուտում էին ու պաոկում քնելու, որ